Տ. ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

Տ. Բագրատ աբեղա Գալստյանը (ավագանի անունով՝ Վազգեն) ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում:

1978-1988 թթ. սովորել է Երևանի թիվ 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1994 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ «Խոսրով եպիսկոպոս Անձևացի. կենսագրական գծեր և Բացայայտութիւն Կարգաց Եկեղեցւոյ. բնագիրն.ու ասպվածաբանությունը» թեմայով:

1995 թ. հունիսի 23-ին, ձեռամբ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասավանդել է եկեղեցական երաժշտություն և «Ս. Պատարագի մեկնություն» առարկաները: Աշխատակցել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությանը:

1996 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր: Միաժամանակ դասավանդել է Սևանի Վազգենյան դպրանոցում:

1998 թ. մեկնել է Անգլիա՝ ուսումը կատարելագործելու Մըրֆիլդի «Ս. Հարություն» ասպվածաբանական քոլեջում և Լիդզի համալսարանում:

2000 թ. հուլիսին, ավարտելով ուսումնառությունը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ վերադարձել է Մայր Աթոռ և օգոստոսի 1-ին նշանակվել Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսուչ: